ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ԶԵԿՈՒՅՑ

«Տեղական մակարդակում սոցիալական քաղաքականությունների վերանայման-բարելավման ծրագիր»

Տավուշի մարզում հետազոտության արդյունքների վերլուծություն

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏԱՎՈՒՇ» ՀԿ

Իջևան, 2019

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Երիտասարդ Տավուշ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող « «Տեղական մակարդակում սոցիալական քաղաքականությունների վերանայման-բարելավման ծրագրի» » շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Երիտասարդ Տավուշ» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իրականացվող ծրագրի նպատակն է Տավուշի մարզում նպաստել սոցիալական ոլորտում քաղաքականություններ իրականացնող պատկան մարմինների ու հիմնախնդրի լուծմամբ զբաղվող մարզային ՔՀԿ-ների միջև ստանձնելու կառուցողական երկխոսության հանձնառություններ և աջակցել բարձրացնելու ՔՀԿ-ների ազդեցությունն բնակչության սոցիալական պաշտպանվածության իրավունքի իրականացման և մատուցվող ծառայությունների որակի ու արդյունավետության, ոլորտի աշխատողների բարեվարքության նորմերի պահպանման վրա:

Հետազոտության նպատակն էր ուսումնասիրել ՍԱՏԳ-ների և համայնքային սոցիալական աշխատողների կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունների համապատաս-խանությունը «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով ամրագրված հիմնադրույթներին, շահառուների կարիքներին, ինչպես նաև վերջիններիս մասնակցությամբ կատարել մշտադիտարկման արդյունքների մասնակցային գնահատում:

Սոցիալական ծառայությունների որակյալ տրամադրման, դրանց համապատասխանության պրակտիկան, առավելությունները և բացթողումների ուսումնասիրելու և համապատասխան առաջարկությունների փաթեթ ներկայացնելու համար իրականացվել է ուսումնասիրություն՝ քանակական և որակական մեթոդաբանությունների համատեղմամբ:

Մեթոդաբանություն

Քանակական հետազոտություն

Քանակական հետազոությունն անցկացվել է Տավուշի մարզի բնակչության շրջանակներում: Թիրախային տարածքներից յուրաքանչյուրի համար ներկայացուցչական ընտրանք ձևավորելու և ընտրանքի մեծությունը հաշվարկելու գլխավոր ելակետ է հանդիսացել գլխավոր համախմբության մեծությունը: Գլխավոր համախմբությունը բաղկացած է եղել թիրախային համայնքներում 18 տարեկանից բարձր բնակիչների թվաքանակից, որի համար աղբյուր են հանդիսացել 2011թվականի մարդահամարի տվյալները[1] տրամադրված ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից, ինչպես նաև 2018 թվականի ընտրողների ցուցակը[2]: Հետազոտությունն անցկացվել է 5 խոշորացված համայքներում՝ Դիլիջան, Բերդ, Նոյեմբերյան, Այրում, Կողբ, ինչպես նաև Իջևանում իր հարակից գյուղերով: Համայնքներում հարցվողների թիվը որոշվել է բնակչության թվին համապատասխան (proportional to size), իսկ հարցազրույցները անցկացվել են 18 տարեկանից բարձր բնակիչների հետ պատահականության սկզբունքով:

[1] https://www.armstat.am/am/?nid=543
[2] http://elections.transparency.am/2018/index.php?am_electorate-by-dob,10

Ընտրանքի մեծության հաշվարկման մյուս կարևոր ելակետերն են վստահության մակարդակի (Confidence Level) և վստահության միջակայքի (Confidence Interval) ցուցանիշները: Հետազոտության արդյունքների ընդունելի ճշգրտություն և հավաստիությունն ապահովելու համար վստահության մակարդակը (Confidence Level) սահմանվել է 97%, իսկ վստահության միջակայքը (Confidence Interval)՝ 5%: Այս ցուցանիշների հիման վրա ընտրանքի մեծության հաշվարկն է՝ **600** հարցվող:
Հարցումները իրականացվել են դեմ առ դեմ կիսաձևայնացված հարցաթերթիկի միջոցով:
Մինչ դաշտային աշխատանքների սկիզբը հարցազրուցավարներն անցել են մանրամասն հրահանգավորում, որի ընթացքում ներկայացվել են հետազոտության նպատակը, հարցվողների ընտրության, ինչպես նաև հարցաթերթի լրացման կարգը:
Բոլոր հարցաթերթը ստուգվել և կկոդավորվել են: Իրականացվել է տվյալների համաքագրման ստուգում առնվազն 30% հեռախոսազանգերի և հետայցերի միջոցով:
Հավաքագրված քանակական տվյալները մուտքագրվել են SPSS համակարգ և վերլուծվել:

Որակական հետազոտություն

Որակական հետազոտությունը իրականացվել է Տավուշի մարզի 4 ՍԱՏԳ-ներում համապատասխան մասնագետների, Մարզպետարանի Ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության ներկայացուցչի, ինչպես նաև համապատասխան ոլորտի փորձագետների հետ: Ընդհանուր առմամբ անցկացվել է **8** խորացված հարցազրույց:

Նախապես մշակված հարցաշարը ներառել է սոցիալական ապահովության և պաշտպանվածության առումով մարզում առկա իրավիճակի վերաբերյալ հարցեր և առաջարկություններ:
Հարզացրույցները ձայնագրվել են, ստանալով հարցվողի համաձայնությունը, ապա վերծանվել են:

Որակական ուսումնասիրությունը նաև ներառել է փաստաթղթային ուսումնասիրություն, նեռարյալ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներ, ոլորտում իրականացված հետոզոտություններ, ինչպես նաև սոցիալական աշխատողների հետ հարցազրույցներ:

Հետազոտության արդյունքներից ելնելով մշակվել է իրականացվող սոցիալական քաղաքականությունների բարելավմանը և արձանագրված թերությունների ու բացթողումների վերացմանը միտված առաջարկությունների փաթեթ:

Հաշվետվությունը ներառում է քանակական և որակական տվյալների վերլուծություն, մեջբերումների, գծապատկերների և աղյուսակների կիրառմամբ, ինչպես նաև եզրակացությունների և առաջարկությունների բաժիններ:

2. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փաստաթղթային ուսումնասիրության և որակական տվյալների վերլուծության արդյունքում ունենք հետևյալ առաջարկությունները Տավուշի մարզում սոցիալական աջակցության ծառայությունները, ինչպես նաև սոցիալական քաղաքականությունը բարելավելու համար՝

1. **Սոցիալական աջակցության ոլորտում տարվող աշխատանքների առավել արդյունավետության համար՝**
   - **Ստեղծել տվյալների էլեկտրոնային շտեմարան (բազա), որտեղ կարձանագրվի յուրաքանչյուր ընտանիքի վերաբերյալ տեղեկատվություն և այդ ընտանիքի համար կատարված աշխատանքը, այդ թվում նաև տրամադրված աջակցությունը:** Բազան հնարավորություն կտա տեսանելի դարձնել ընտանիքում կատարված աշխատանքերը, արդյունքերը, թույլ կտա յուրաքանչյուր կառույցին պետական և ոչ պետական, որոնք աշխատում են միևնույն ընտանիքի հետ, աշխատել ավելի արդյունավետ՝ այսինքն յուրաքանչյուրի աշխատանք կլինի մեկ այլ կառույցի աշխատանքի շարունակությունը՝ ըստ կարիքների գնահատման և անհատական զարգացման պլանի, որը գրվելու է համայնքային սոցաշխատողի և ոչ պետական սոց. աշխատողի կողմից: Նախատեսում ենք բազան աշխատացնել հետևյալ տարբերակով: Կստեղծվի ծրագիր, որտեղ մուտք կարվի տվյալ համայնքում ապրող այն ընտանիքների տվյալները, որոնց հետ սոցիալական աշխատանքեր են իրականացնում պետական և ոչ պետական կառույցները: Բազան կաշխատացնի համայնքապետարանը և հաշվետու կլինի մարզպետարանին, ինչը հնարավորություն կտա ցանկացած ժամանակահատվածի կտվածքով վերհանել սոցիալապես անապահով ընտանիքերի հետ կատարված աշխատանքները և դրանց արդյունավետությունը, ինչպես նաև վիճակագրություն վարել, ինչը կհեշտացնի նաև կատարված աշխատանքի գնահատումը:
   - Հնարավորինս համապատասխանեցնել սոցիալական աշխատողների պարտականությունների ծավալը և դրանց համար օրենքով նախատեսված ֆինանսական, նյութատեխնիկական ռեսուրսները: Սահմանել յուրաքանչյուր համայնքային սոցիալական աշխատողի համար դեպքերի վարման քանակ:
   - Օրենսդրական փոփոխություններ անել, մասնավորապես սոցիալական աշխատողների սոցիալական պաշտպանությունը և անվտանգությունն ապահովելու համար:
   - ՍԱՏԳ-ներում ներդնել իրավաբանի հաստիք, ով կտրամադրի մասնագիտական խորհրդատվություններ ըստ շառահուռների կարիքների:
   - Իրականացնել շարունակական վերապատրաստումներ սոցիալական աշխատողների համար և ներմուծել սոցիալական աշխատողների լիցենզավորում, քանի որ շահառու

ընտանիքիների հետ, մասնավորապես տունայցերի դեպքում, պետք է աշխատեն որակյալ մասնագետներ:

2. Սոցիալական աջակցության ծառայությունների ավելի արդյունավետ աշխատանքի համար անհրժեշտ ռեսուրսների պակաս՝

- Ապահովել սոցիալական աշխատողներին համապատասխան նյութատեխնիկական միջոցներով (տրանսպորտային, տեխնիկական, կապի միջոցների և գույքային այլ անհրաժեշտ ռեսուրսներ):
- Առաջարկում ենք օրենքով նախատեսել ՍԱՏԳ-ի աշխատակիցների և համայնքային սոց. աշխատողների փոխկապակցված աշխատանք, ինչն ավելի ծախարդյունավետ կլինի: ՍԱՏԳ-ն հիմք/ նպաստի նշանակման և այլ հարցերում/ կընդունի համայնքային սոցիալական աշխատողի կողմից իրականացված տունայցի արդյունքում կատարված կարիքի գնահատումը, նպաստի արդար նշանակման համար պատասխանատվություն կկրի նաև համայնքային սոց. աշխատողը:

Քանակական հարցումների արդյունքում պետության կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունների որակը բարելավելու համար հարցվածները մի քանի կարևոր առաջարկեր են արել: Դրանք հիմնականում վերաբերվում են սոցիալական այն խնդիրներին, որոնք ուշադրության կարիք ունեն: Դրանք են, մասնավորապես տարեցները, այդ թվում նաև միայնակ տարեցները, հաշմանդամները, առանց կացարանի ընտանիքները, երիտասարդ ընտանիքները: Այս խմբերի մասին առաջարկները վերաբերվում են թոշակների և նպաստների բարձրացմանը, անհրաժեշտության դեպքում տունայցների իրականացմանը, արհեստական կերով սնվող երեխաներին ֆինանսական աջակցությանը:

Այսպիսով, հարցվածների՝ սոցիալական ծառայությունների ոլորտի բարելավմանը վերաբերվող առաջարկները կարելի է մի քանի ենթախմբի բաժանել: Մասնավորպես, հարցվածների մի մասը նշել են այն խնդիրները և այն խոցելի խմբերը, որոնք կարիք ունեն ավելի մեծ ուշադրության: Մյուս մասը անդրադարձել է սոցիալական աշխատողների և ՍԱՏԳ-ի մատուցվող ծառայությունների որակին: Հարցվածների 27,3% առաջարկություն չեն արել:

Ի դեպ, հարցվածների 2,5% գտնում են, որ պետք է վերացնել ընտանեկան նպաստի համակարգը, քանի որ շատ ընտանիքներ գերադասում են ստանալ նպաստ և չաշխատել: Հարցվածների 12,5% գտնում են, որ բոլոր երեխաները պետք է մինչև 18 տարեկան լրանալը ամսեկան գումար ստանան: Այս առաջարկը միտված է փոխարինելու ընտանեկան նպաստի գաղափարը, որը դիտվում է որպես աշխատանքի խոչընդոտ, քանի որ աշխատելու դեպքում ընտանիքը զրկվում է ընտանեկան նպաստից:

Ամփոփելով հարցվածների առաջարկները, և հետազոտության ընթացքում հավաքագրված քանակական տվյալները սոցիալական ծառայությունների ոլորտը բարելավելու համար առաջարկվում է հետևյալը.

- Տեղեկատվական արշավներ կազմակերպել բոլոր համայնքներում՝ լուսաբանելու ՍԱՐԳ-ի և հայանքային սոցիալական աշխատողների գործառույթները: Այստեղ կարևոր է ուշադրություն դարձնել տարեցներին և այլ խոցելի խմբերին, քանի որ տեղեկատվությունը նրանց համար համեմատաբար ավելի դժվար հասանելի է:
- Տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու համար կարելի է կազմակերպել համայնքային հանդիպումներ, տպագիր նյութեր տարածել, կարճ սոցիալական գովազդներ նկարահանել և տարածել տեղական հեռուստաալիքներով: Դիլիջանի և Այրումի շրջաններում տեղեկացվածության բարձրացման ավելի մեծ կարիք կա:
- ՍԱՏԳ-ում համապատասխան աշխատողներ և համայնքային սոցիալական աշխատողներ ընտրելուց նախընտրություն տալ համապատասխան կրթություն ունեցող աշխատողների:
- Պարբերաբար վերապատրաստումներ անցկացնել ՍԱՏԳ-ի աշխատակիցների և համայնքային սոցիալական աշխատողների շրջանում:
- Վերապատրաստումների ընթացքում շեշտը դնել ոչ միայն մասնագիտական որակավորման բարձրացման վրա: Քանի որ սոցիալական աշխատանքը հիմնականում կատարվում է խոցելի խմբերի հետ, պետք է վերապատրաստումների ընթացքում հաշվի առնել նաև հոգեբանական աշխատանքի կարևորությունը և մասնագիտական էթիկան:
- Մեծ ուշադրության կարիք ունեն տարեցները, այդ թվում միայնակ տարեցները, հաշմանդամները:
- Վերանայել ընտանիքների գնահատման համակարգը, դարձնել այն ավելի թափանցիկ:
- Մոնիթորինգի և վերահսկողության համակարգ ներդնել, որը թույլ կտա գնահատել ՍԱՏԳ-ի և սոցիալական աշխատողների աշխատանքը, ավելի արագ արձագանքել բնակիչների խնդիրներին և հետևել դրանց լուծման ընթացքին: